ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔԻ ՀԱՐՑՈՒՄՆԵՐՈՒՄ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Էդիկ Կյուրեղյան
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող

Գիտականորեն հիմնավորված սուբյեկտիվ վիճակագրության հանդեպ հանրության պաշտոնական ու ոչ-պաշտոնական վերաբերմունքի զարգացումները վերջին երկդարյա պատմության մեջ վկայում են քաղաքական ու քաղաքացիական ազատությունների ու նման գիտելիքի պահանջարկի միջև գոյություն ունեցող՝ գրեթե մաթեմատիկական ճշգրտությամբ ուղիղ համեմատական կապի մասին: Որքան ավելի տվյալ պետության, հասարակական կառավարման մեջ գերակա է իրական ժողովրդավարությունը, ընտրական համակարգում ու կառավարման տարբեր մակարդակներում զարգացած է կամավոր զանգվածային մասնակցայնությունը, այնքան ավելի է հանրային կարծիքը դիտարկվում որպես անհրաժեշտություն, արդյունավետ կառավարման, մարդկային ու ծառայական հարաբերությունների օպտիմալ կարգավորման գործիք: Ասվածը ոչ միայն վերաբերում է քաղաքական կյանքում լայնորեն տարածված հարցումներին, որոնք առնչվում են պետական կառավարման տարբեր մակարդակներում /նախագահական, օրենսդիր, տեղական ինքնակառավարման մարմիններ/ ընտրությունների հետ, այլև տնտեսական, կրթական, մշակութային ոլորտների ամենատարբեր խնդիրներին, այնտեղ, որտեղ ի շահ հանրության ու առանձին քաղաքացու կարևորվում են մարդկանց պատկերացումներն ու ցանկությունները: Արդեն չորս տասնամյակից ավել /հատկապես նախորդ դարի 90-ականների կեսերից/ այն վերաբերում է նաև «խորհրդային» ու « ետխորհրդային» Հայաստանին, նրա հանրային կյանքի տարբեր ոլորտներին[1]: Որքան էլ որ հակասական

[1]Մանրամասն տե՛ս **Ноэль Э.**, Массовые опросы (Введение в методику демоскопии); М., ''Прогресс'' 1978; Опросы общественного мнения. Американский опыт. // Электронная публикация: Центр гуманитарных технологий(27. 12. 2007). URL: http//gtmarket.ru/laboratory/ 2007/1561; **Погосян Г. А.**, Современное армянское общество: особенности трансформации. Изд-во Academia, М., 2005; **Պողոսյան Գ.**, Հայ հասարակությունը XXI

են հայաստանյան կյանքի զարգացումները հետխորհրդային ժամանկահատվածում, կապված ռազմաքաղաքական իրադրության /«Ոչ պատերազմ, ոչ խաղաղություն»/ ու շուկայական տնտեսակարգի ձևավորման հետ, այդուհանդերձ ժողովրդավարացման գործընթացներն ու դրանց «ատրիբուտ» հասարակական կարծիքի հարցումները համառորեն ուղի են հարթում ինչպես պետական կառավարման, այնպես էլ հանրային գիտակցության մեջ: Այն հավակնում է որակական առաջընթացի հատկապես 2018թ. կատարված «թավշյա» հեղափոխության տրամաբանությամբ, որը, ինչպես նշում է քաղաքագետ Է. Օրդուխանյանը. «...խթանեց հայ հասարակության մեջ մասնակցային քաղաքական մշակույթը՝ այն բարձրացնելով ավելի կայուն հիմքերի վրա»[2]: Այժմ, երբ դեռ շարունակվում է համաշխարհային աղետը, կապված Covid-19 վիրուսի հարուցած համավարակի հետ, արդեն կարծիքներ է հնչում, որ այն յուրովի է խթանելու գլոբալ համերաշխությունը, որտեղ հասարակությունների կառավարման փոխկապակցվածության մեջ ամենատարբեր մակարդակների ու ոլորտների վերաբերյալ սուբյեկտիվ վիճակագրությունների կարևորությունը վերջին տեղում չէ[3]: Իսկ նման վիճակագրությունը պահանջում է սոցիոլոգիական գիտելիքի որակապես ավելի բարձր մակարդակ:

Մյուս կողմից, ինչպես որ ուղիղ համեմատական կապով կապված են պետական ու հասարակական կառավարման մեջ հանրության մասնակցայնությունն ու սոցիոլոգիական գիտելիքի հանդեպ պահանջարկը, այնպես էլ տվյալ պահանջարկը սերտորեն առնչվում է հետազոտական տվյալների հավաստիության ու նրա հանդեպ վստահության հետ: Սույն ոլորտում առկա են նշանակալից ձեռքբերումներ, հայտնի են բազմաթիվ աշխատություններ, այդ թվում

դարասկզբին; Եր., 2008; ԵՊՀ, Սոցիոլոգիայի ֆակուլտետի տարեգիրք 2008, Եր. 2009; **Առաքելյան Ս.** , **Կյուրեղյան Է.** , **Ճաղարյան Մ.**, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը հասարակական կարծիքի համապատկերում (Գիտաուսումնական մտորումներ և փաստեր), Եր., Տիր, 2018:

[2] Տե՛ս **Օրդուխանյան Է.**, Քաղաքական մշակույթը Հայաստանում. էվոլյուցիա և միտումներ, Եր., Երևանյան էքիզ, 2020, էջ 33:

[3]Տե՛ս **Յուվալ Նոյ Հարարի**, Աշխարհը կորոնավիրուսից հետո: https://mediamax.am/am/news/society/36986/?fbclid/20.06.2020:

դասական բնույթի[4]: Տվյալ հիմնահարցերի միաջազգայնորեն ընդունված կենտրոններից է նաև Հայաստանի Սոցիոլոգիական Ընկերակցությանը, իսկ ղեկավար, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ. Պողոսյանը, միջազգային հեղինակությամբ մասնագետ[5], ինչն ինքնին պարարտ հող է ստեղծում սույն ոլորտի մասնագիտական ուսումնասիրությունների համար:

Հանրային հարցումները ողջ առաջադիմական աշխարհում դարձել են ընտրական գործընթացների կարևորագույն բաղադրատարրերից մեկը: Ընտրությունների տարբեր փուլերում արդյունքները կանխատեսելու, գիտականորեն հիմնավորված կերպով դրանց վրա ժամանակին ու արդյունավետ կերպով ներազդելու հարցերում ներկայացուցչական հարցումներն ու դրանց տվյալների հանդեպ վստահելիությունը ունեն գրեթե անփոխարինելի նշանակություն: Ծախսվում են ոչ քիչ /երբեմն ահռելի/ֆինանսական, մարդկային ռեսուրսներ, որոնց նպատակայնությունն ու արդարացվածությունը շոշափում են քաղաքական մեծ ու փոքր «խաղերի ու խաղացողների» էական շահերը: Թվում է, թե այն հասցվել է կատարելության ու էապես սխալվելու տարբերակը գրեթե բացառվում է: Այդուհանդերձ ավելի ճշմարիտ է «ճանաչողությունը սահման չունի նաև հանրային կարծիքի ուսումնասիրությունների ոլորտում», ինչի վառ ապացույցն էր 2016 թվականի ԱՄՆ նախագահական ընտրությունները: Ընտրական գործընթացների գրեթե ողջ ընթացքում հարցումների գերակշիռ մասը «գուշակում» էր Հիլարի Քլինթոնի հաղթանակը այն դեպքում, երբ հաղթեց Դոնալդ Թրամպը: Փաստ, որը յուրովի ցայսօր խթանում է կիրառական սոցիոլոգիայի բնագավառի մասնագետներին, հասկանալու համար զանգվածների ընտրության քողարկված, խորքային շարժառիթները, դրանց վրա ազդող ամենատարբեր, այդ թվում գերժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները:

---

[4]Տե՛ս **Ноэль Э.**, указ. соч. С.121-193; **Ядов В. А.** ,Стратегия социологического исследования. Описание, обьяснение, понимание социальной реальности. , М., 1998, էջ 111-122; 212-214; 233-249; **Тавокин Е. П.** , Основы методики социологического исследования. М. , 2009.С. 50-71:

[5]Տե՛ս **Պողոսյան Գ.,** Սոցիոլոգիական ինֆորմացիայի հավաստիության աստիճանի բարձրացման հարցերը // «Սոցիալիստական ապրելակերպը և անհատի աշխատանքային ակտիվությունը» ժողովածու, Եր., 1983, էջ 156-195: **Նույնի՛** Метод интервью и достоврность социологической информации, Ер.: Изд-во АН Арм. ССР,1985.

Ինչպես դիպուկ նկատում է ակադեմիկոս Գ.Պողոսյանը, գիտնականները վաղուց հնարել են միկրոաշխարհի ու տիեզերական տարածքի, լույսի ինֆրակարմիր և ուլտրամանուշակագույն տիրույթների, մարդկային օրգանիզմի խորքային երևույթների ու գործընթացների հետազոտման միջոցները, սակայն՝ «…սոցիոլոգիայում շարունակվում է սոցիալական տիեզերքի զուտ «տեսանելի» մասի ուսումնասիրությունը: Հետազոտողներին դեռևս անմատչելի են մեր սոցիումի «սև խոռոչներն» ու «սպիտակ թզուկները»: .. դեռ պետք է մշակվեն սեփական «ինֆրակարմիր», «ուլտրամանուշակագույն», ..կամ ինչ-որ «նանոսոցիոլոգիական» հետազոտական տեխնոլոգիաները, որոնք, հավանաբար, թույլ կտան որսալ դեպի վիրտուալ աշխարհ հեռացող սոցիալականությանը»[6]: Եվ ինքը, մտքերի հեղինակը առաջիններից մեկը հավանականային մաթեմատիկայի կիրառմամբ «որսացել» է այն իրողությունը, թե զրուցավարի գերակա արժեքները յուրովի ազդում են հարցերին տրված պատասխանների վրա[7]: Միտք, որը սոցիոլոգիական գիտելիքի համընդհանուր բնույթին զուգահեռ, նաև յուրովի կամուրջ է դեպի «Էթնոմշակութային սոցիոլոգիա»[8]:

Այնպես որ, հանրային կարծիքի ուսումնասիրման տվյալների հավաստիության խնդիրը արդիական է և ունի տեսա-գործնական կարևոր նշանակություն: Մեր հոդվածի նպատակն է, հիմնվելով դասական /այդ թվում հայրենական/ ձեռքբերումների ու սեփական հետազոտական փորձի վրա, դիտարկել երևույթի որոշակի /այդ թվում

---

[6] Տե՛ս **Погосян Г.,** Социология бесовщины и плутовства.(Рец. на кн.) Тощенко Ж.Т. Фантомы российского общества. М., Центр социального прогнозирования и маркетинга, 2015// Социологический журнал. 2015. №1.С.158-163.

[7] Մանրամասն տե՛ս **Պողոսյան Գ.**, Սոցիոլոգիական ինֆորմացիայի հավաստիության աստիճանի բարձրացման հարցերը // «Սոցիալիստական ապրելակերպը և անհատի աշխատանքային ակտիվությունը» ժողովածու, Եր., 1983:

[8]Սույն հոդվածի հեղինակը պաշտպանում է «Ազգային սոցիոլոգիայի» գոյության իրավունքը, ինչը չի հակասում գիտական գիտելիքի օբյեկտիվության հիմնարար թեզին: Դրանով ընդամենը ընդգծվում է այն էթնոմշակութային ու պատմական գործոնների կարևորությունը, որոնք, ի լրումն համամարդկային բաղադրիչների, ձևավորում են որոշակի սոցիոլոգիական տեսությունները: Գոյություն չունի անգլիական, ֆրանսիա-կան, ամերիկյան կամ հայկական ֆիզիկա, սակայն գոյություն ունեն նրանց «սոցիոլոգիաները»

և հատկապես հայաստանյան շեշտադրումով/ յուրահատկությունները, նաև՝ հարցադրման տեսքով:

Ըստ դասական տեսության հայտնի է, որ հասարակական կարծիքի ընտրանքային հարցումներում տվյալների հավաստիության առանցքային խնդիրներից մեկը գլխավոր համախմբի հանդեպ ընտրանքի ներկայացուցչության ապահովումն է:[9] Իսկ ընտրանքի ներկայացուցչության ապահովման հիմնական հարցերից մեկը գլխավոր համախմբի համասեռության չափն է՝ ըստ հետազոտության համար առավել էական բնութագծերի:[10]Սա այն պատմական փորձաքարն է, որը «փոխեփոխ» հիասթափեցրել է սոցիոլոգիական հարցումներից ու խթանել է նրա զարգացումը:[11] Հակիրճ բերենք մի քանի տիպական օրինակ հանրային կարծիքի ուսումնասիրման պատմությունից:

Կիրառական սոցիոլոգիայի ակտիվ զարգացման, հանրայնորեն ինքնահաստատման ժամանակահատվածներից մեկը անցյալ դարի 20-30-ական թվականներն էին: 1929 թվականին անցկացված մի ուսումնասիրության մեջ նպատակադրված էին ստանալ ամերիկյան չափանիշներով միջին վիճակագրական բնակավայրի /Middletown/ սոցիոլոգիական նկարագիրը /կրթական, կրոնական, աշխատանքային և այլն ոլորտների պատկերը/: Սակայն, ելնելով սեփական սկզբունքներից /«արժեքային գերակայություններից/, ընտրանքում «անտեսել» էին քաղաքում բնակվող աֆրոամերիկացիներին, կաթոլիկներին ու հրեաներին: Արդյունքում միջին վիճակագրական բնակավայրի մակարդակով երկիրը ներկայացված էր շատ ավելի համասեռ, քան իրականում գոյություն ուներ, ինչն ի սկզբանե անճշտություն էր: Տվյալ ու նմանատիպ հետազոտությունների ու դրանց արդյունքների քաղաքական հնարավոր ենթատեքստը մեր հոդվածի շրջանակից դուրս է[12]:

---

[9]Հոդվածում խնդիր չունենք ներկայացուցչության մաթեմատիկական վիճակագրության, ընտրության տեխնիկայի մանրամասները քննարկելու:

[10] Տե՛ս **Ядов В. А.**, Стратегия социологоческого исследования. М. , 1998.С.120:

[11] Տե՛ս **Докторов Б.**, 1824-1936-2016 годы. Исследование общественного мнения: от Гэллапа к пост-Гэллапу// Два века изучения общественного мнения в США: от ‘’соломенных’’ опросов к электронным. URL: http//gefter. ru /archive/21222/20.02.2020/.

[12] Ամերիկյան քաղաքական կյանքի հետ նման հետազոտությունների հակասական կապի մասին ավելի մանրամասն տե՛ս Опросы общественного мнения. Американский опыт. // Электронная публикация: Центр гуманитарных технологий. -27.12.2007. URL: https://gtmarket.ru/library/ articles/1561/20. 02. 2020/.

Մասնագիտական աշխարհին առավել հայտնի են նախագահական ընտրությունների հետ կապված միջադեպերը: Ընտրական աշխարհին հարցումներով հայտնի ու հեղինակություն վաստակած Literary Digest ամսագիրը, 1936 թվականի նախագահական ընտրություններից առաջ, 10մլն ընտրողի ուղարկելով բացիկ ու ստանալով 2,3 մլն պատասխան, գերապատվությունը տալիս էր Ալֆրեդ Լանդոնին: Մինչդեռ նախագահ ընտրվեց Ֆրանկլին Ռուզվելտը, որի հաղթանակը, ընդամենը 5000 ընտրողի հարցումով ճշգրիտ գուշակել էր Ջորջ Հելապը: Վերլուծությունը պարզել էր սխալվելու հիմնական պատճառը: Բանն այն է, որ բացիկների հասցեատերերը ընտրվել էին ունեցվածքի պարզ չափանիշով՝ նրանց, ովքեր ունեին ավտոմեքենա ու անձնական հեռախոս /օգտագործվել էին հեռախոսագրքերն ու ավտոմեքենաների գրանցման տվյալները/: Մինչդեռ ստացվեց, որ հիմնականում պատասխանել էր հանրության ունևոր մասը, ովքեր էապես չէին տուժել 20-ականների Մեծ Ճգնաժամից: Փաստ, որը չէր արտահայտում ամերիկյան ողջ ընտրող հանրության կարծիքը: Ուրիշ խոսքով հաշվի չէր առնվել ընտրողների անհամասեռությունը: Թերևս էապես ավելի քիչ շեղումով /ընդամենը 5,0%/, սակայն նույն պատճառով հարցումները նորից սխալ գուշակեցին 1948թ. հաղթողին: Այստեղ հաղթեց Հարրի Թրումենը այն դեպքում, երբ «Հելլապն» ու մյուս հետազոտական կենտրոնները հաղթանակը «շնորհում» էին հանրապետական Թոմաս Դյուիին: Եվ վերջապես պատմականորեն ամենաթարմ օրինակը, կապված 2016թ. ընտրությունների հետ: Այն հաղթեց ներկայիս նախագահ Դոնալդ Թրամպը այն դեպքում, երբ գրեթե բոլոր հեղինակավոր հարցումներում, թեկուզ ոչ շատ մեծ տարբերությամբ կանխատեսվում էր Հիլարի Քլինտոնի հաղթանակը: Վերլուծաբանների կարծիքով այս անգամ «մեղավորը» տեղեկատվական տեխնոլոգիաներն էին, համացանցի չնախատեսված հնարավորությունները, նաև՝ «հեռավար» կերպով ազդելու ընտրողների տրամադրության, նախապատվությունների վրա[13]:

[13] Հետաքրքիր է, որ մի շարք մասնագետներ, վերլուծելով տվյալ ընտրությունների հետ կապված ամբողջական տեղեկատվությունը, եկել են համոզման, որ հարցումները սխալ չեն կանխատեսել ընտրողների ձայների որակական հարաբերակցությունը /Հ. Քլինթոնը ավելի շատ ձայներ էր հավաքել/, սակայն ամերիկյան ընտրական համակարգի նրբությունները թույլ տվեցին հաղթել Դ. Տրամպին: Մանրամասն Տե՛ս http://www.

Սույն հոդվածի շրջանակում չի տեղավորվում բազմաքանակ ու բազմաբնույթ այն հարցումներից օրինակները, որտեղ, նույնիսկ զարմանալու աստիճան ճշգրիտ գուշակություններ են կատարվել և արդյունքները թույլ են տվել «պատվիրատուներին» լուծել իրենց հուզող քաղաքական, տնտեսական, կրթական, բազմաթիվ ու բազմաբնույթ այլ սոցիալական, սոցիալ-հոգեբանական բնույթի հիմնախնդիրներ: Ընդ որում, ոլորտի պատասխանատուները, սուբյեկտիվ պատկերացումներին ու կենսափորձին, աշխատանքային փորձին զուգահեռ, ձեռքի տակ ունենալով նաև գիտական հիմնավորում, կարողացել են կատարել կառավարչական ավելի օպտիմալ գործողություններ, ունենալ զգալի ֆինանսա-տնտեսական խնայողություն:[14] Հատկապես համացանցի առկայության պայմաններում այն մատչելի է ցանկացածին: Կարևորը մեզ համար այն է, որ «Գլխավոր համախմբի» համասեռության աստիճանի ճշգրիտ որոշումը, ինչը հիմնականում որակական վերլուծության ու մասնագիտական հնարամտության արդյունք է, էական նշանակություն ունի որոշակի պետականության ու էթնոմշակութային ինքնատիպության պայմաններում, այնպիսին, օրինակ, ինչպիսին Հայաստանի Հանրապետությունն է 21-րդ դարի երրորդ տասնամյակում:

Շատ հետազոտություններում, հատկապես պետական ու հասարակական կառավարման միջին մակարդակներում /կրթություն, արդյունաբերություն, առևտուր, սպասարկում և այլն/, զուտ ազգային պատկանելությունը, ըստ որի Հայաստանը համասեռության աստիճանով առաջնակարգ դիրքերում է, չի կարող բավարար տեղեկություններ տալ այն խնդիրների մասին, որոնք վերաբերում են արժեհամակարգի գործնական ուղղվածությանը, բարոյականության ըմբռնումներին, կենցաղային սրբություններին, ոչ պաշտոնական հարաբերությունների գերակայություններին, օրինականության ու կարգապահության շարժառիթներին, արդարացիության հանդեպ դիրքորոշումներին և այլն: Այստեղ Հայաստանի Հանրապետությունը, ի հակադրումն ազգային չափանիշով համասեռության և ի լրումն

kapior.kz/novosti-assotsiatsii/events/nado-li-schitat-pobedu-trampa-porazheniem-sotsiologii/12.03.2020/

[14] Տե՛ս, **Ноэль Э.**, указ. соч. С. 23-26:

բազմազգ ու բազմակրոն երկրների խայտաբղետության, կարող է հանդես գալ որպես աշխարհում առավել խայտաբղետ հանրություններից մեկը: Իսկ որ քաղաքակրթական ու մշակութային տարբերությունները իրական վարքում նույն երևույթի հանդեպ ունեն որակապես տարբեր կարծիքներ ու վարքի դրսևորումներ, դիպուկ կերպով ցուցադրված է հետևյալ գիտափորձում:[15]

Սույն համատեքստում, դիտարկենք Հայաստանի Հանրապետության ներկա բնակչության կազմը, որը պատմականորեն ձևավորվել է վերջին երկու դարի ընթացքում, և որը հիմք է այն խայտաբղետության, ինչը, տարբեր գիտական հարցադրումներում կարող է ներազդել հարցումների հանդեպ վստահության ու դրանց արդյունքների հավաստիության վրա:[16] Այն, առաջին մոտավորությամբ, անտեսելով միախառնությունները, կարող ենք ասել, որ բաղկացած է՝ 1. Ռուս-պարսկական պատերազմից հետո Ռուսաստանի կազմում ձևավորված Արևելյան Հայաստանի տեղաբնակներից; 2. Դարերով Պարսկաստանի ազդեցությունը կրած, երկու դարեց ավելի այնտեղ գոյատևած ու՝ այնուհետև 1828թ., և, դրանից հետո Արևելյան Հայաստան հայրենադարձվածներից; 3. Այդ նույն ժամանակներում ներկայիս Ադրբեջանի ու հարակից պատմական

---

[15] 1998թ. Մայիսի 7-ի համարում, «Ռոսսիյսկայա գազետա» թերթը լոնդոնյան «Գարդիան»-ից վերատպել է մի գիտափորձի հատկանշական արդյունքները: Քողարկված տեսախցիկը տարբեր իրադրություններում հետևում է ԱՄՆ-ի, Գերմանիայի, Անգլիայի ու Ճապոնիայի տուրիստական խմբերի վարքին: Մեջբերենք գիտափորձից երկու դրվագ: Մի դեպքում, տեսարժան վայր ուղեկցող, իբրև թե հարբած դերասան-վարորդը, երբ տեղավորվում է դեկի մոտ. Անգլիական խումբը միանգամից հրաժարվում է նստել; Ճապոնականը իրեն պահում է անվրդով մինչև այն պահը, երբ խմբի ղեկավարը հայացքով ցույց է տալիս վարորդի ոտքի մոտ ընկած օղու դատարկ շիշը; իսկ գերմանացիները սկսում են հուզվել, որ եթե աղմուկ բարձրացնեն, կարող են նրան գործից ազատել: Մեկ ուրիշ դեպքում, երբ խմբերը սրճարանում էին, բարի տեղյակ աշխատակիցը հեռանում է սեղանի մոտից, որից «օգտվելով» դերասան-փորձարարը առանց վճարելու սեղանից թռցնում է մի շիշ օղի. Անգլիացիներն ու ամերիկացիները ուրախությամբ հետևում են նրա օրինակին; գերմանացիները չեն գողանում; ճապոնացիները ոչ միայն չեն գողանում, այլև այդ մասին հաղորդում են սեփականատիրոջը(Մանրամասն Տե՛ս **Կյուրեղյան Է.**, Կիրառական սոցիոլոգիա; Եր., 2015, էջ 270-274):

[16] Մեր կարծիքով հայաստանյան հանրության խայտաբղետության ազդեցությունը ոչ պաշտոնական հարաբերությունների վրա, ինչը դիալեկտիկորեն հակասական կերպով անդրադառնում է նաև պաշտոնական կյանքի վրա, համարժեքորեն դեռևս ուսումնասիրված չէ

հայկական տարածքներից Արևելյան Հայաստան տեղաշարժ-վածներից; 4. 20-րդ դարասկզբին/1915թ-ին ու դրանից հետո/ Արևմտյան Հայաստանում կազմակերպված Հայոց Ցեղասպանության հետևանքով տարբեր նահանգներից մազապուրծ եղած փախստականներից / /հայկական տարածաշրջաններ, վարչական միավորներ, որոնք, ունենալով հազարամյակների հարուստ, նաև հակասական պատմություններ ու զարգացումներ, Օսմանյան կայսրության կազմում էապես անփոփոխ գոյատևել են գրեթե 8/ութը/ դար: Դրանք կենցաղով, արժեհամակարգով ու ապրելակերպով հանդիսացել են Պատմական Հայաստանի «ենթաքաղա-քակրթություններ»/Վան, Մուշ, Էրզրում և այլն//; 5. Երկրորդ Աշխարհամարտից հետո տարբեր տարածաշրջաններից հայրենա-դարձվածներից; 6. 1960-70-ականներին Իրանից հայրենա-դարձվածներից; 7. Խորհրդային Միության գոյության ընթացքում Հայաստանում ինքնահաստատված Լեռնային ու Դաշտային Ղարաբաղի հայությունից; 8. Նախիջևանի հայությունից; 9. Արցախյան գոյամարտի արդյունքում ադրբեջանահայության փախստականներից; 10. Ջավախքի հայությունից; 11. Վրաստանի մյուս տարածքների հայությունից:

Ենթադրյալ աշխարհայացքային /աշխարհազգացողության ու աշխարհընկալման/ տվյալ բազմիմաստության, որպես ածանցյալ՝ սոցիալ-կենցաղային, բարոյա-իրավական ու կառավարչական «խառնիճաղանջության» մեջ, ի հավելումն սոցիալ-պատմական յուրահատկությունների, սեռատարիքային, ընտանեկան, աշխարհա-գրական և այլ համընդհանուր-մարդկային բաղադրատարրերի, վերջին երկու դարում ձևավորվել է Արևելյան Հայաստանի հանրության հասարակական գիտակցությունը, անհատական, ընտանեկան ու պետական շահերի ըմբռնումն ու գերակայութ-յունները: Ըստ որում, էթնո-մշակութային նման «խառնարանում» ազգաբնակչության քաղաքական ճաշակն ու գերակայությունները /անկախ դրանց գիտակցականության աստիճանից/ ձևավորվել են վերջին հարյուրամյակների երկրաքաղաքական ու տարածա-շրջանային հակասական /երբեմնի՝ իրարամերժ/ զարգացում-ների, դրանցից արտաքուստ կրած ուղղակի կամ անուղղակի ազդեցությունների ֆոնին: Այնպես որ, եթե վերոնշյալ գիտափորձը նույն նպատակով կրկնվի հայաստանյան պայմաններում, շատ

հնարավոր է, որ որոշակի իրադրության մեջ հետազոտությանը մասնակցող ներհայաստանյան մի խումբը վարվի ճապոնականի նման, մյուսը՝ գերմանականի, երրորդը՝ անգլիականի, իսկ չորրորդը՝ ամերիկյանի: Մեկ ուրիշ իրադրության մեջ, նախորդում ճապոնականի նման վերաբերվողը կարող է իրեն դրսևորել ամերիկյանի, իսկ գերմանականինը՝ ճապոնականի նման և այլն: Սա իրողություն է, ինչն անտեսելը «լավագույն դեպքում» չի ավելացնում վստահությունը Հայաստանի սոցիալական կյանքի տարբեր ոլորտներում անցկացված հանրային կարծիքի հարցումների օգտակարության, արդյունքների հավաստիության հանդեպ:

Էթնիկական պատկանելության պարզ, երբեմնի մակերեսային համասեռության ֆոնին, կիրառական սոցիոլոգիայի, մասնավորաբար հանրային կարծիքի ուսումնասիրման համար կարևոր՝ հայաստանյան հանրության իրական խայտաբղետության մյուս գործոնը կապված է հայ անհատի ընդգծված իքնատիպության հետ: Գործոն, ինչը նույնպես իր դերն ունի սուբյեկտիվ վիճակագրության հանդեպ ունեցած վերաբերմունքի ձևավորման հարցում: Եվ այստեղ, սուբյեկտիվորեն կամ արհեստականորեն տարածված այն տեսակետը, թե տվյալ ինքնատիպությունը առավելապես եսամոլության /էգոիզմի/ կամ ինքնակարծության արդյունք է, գիտականորեն չի կարող լիարժեք «լույս սփռել» երևույթի վրա: Վարկածի մակարդակով ընդամենը այստեղ նշենք, որ ինքնատիպության /անհատական անկրկնելիության/ համեմատաբար ավելի գերակա ու թափանցիկ արտահայտությունը «միջին վիճակագրական» հայ անհատի բնավորության մեջ էապես կապված է բանական գոյության համար առաջնային նշանակություն ունեցող «ազատության» ու «տիեզերականության» աշխարհզգացողության հետ: Որքանով է այն գիտակցված, կարող են ցույց տալ միայն համապատասխան գիտափիլիսոփայական հետազոտությունները[17]: Այդուհանդերձ տվյալ վարկածի օգտին են խոսում հայոց

[17] Հարակից որոշ հարցերի մասին մասնավորաբար տե՛ս **Պողոսյան Գ., Նաղդյան Ռ.**, Անձը փոխակերպվող հասարակությունում, Եր., 2007, էջ 97-100: **Կյուրեղյան Է.,** Աշխարհայացքային ինքնակրթությունը որպես հայոց պետականության ամրապնդման գործոն // Փիլիսոփայությունը արդի աշխարհում. ՅՈՒՆԵՍԿՕ-ի հռչակած Փիլիսոփայության համաշխարհային օրվա կապակցությամբ հրավիրված գիտաժողովի նյութեր, Եր., Եվրոպրինտ, 2017, էջ 166-177:

պատմության ներկա բացահայտումներն ու փոխլրացումները, աշխարհով մեկ սփռված հայության ապրելակերպը, գործունեությունն ու էթնոմշակութային ուրիշ միջավայրում գոյատևման ու զարգացման անհամար ու ինքնատիպ դրսևորումները: Ոչ գիտականորեն, ոչ էլ բարոյապես հնարավոր չէ պատկերացնել, որ նույն ազգային պատկանելությամբ բոլորը ունենան բարձրագույն կազմակերպվածություն ու ընդհանուր շահերի գերակայության գիտակցում: Այդ պատճառով թերևս ավելի բնական է /թեկուզ ոչ ցանկալի/, որ, էթնոմշակութային ինքնատիպությունից չհրաժարվող հայության որոշակի մասի մոտ «սովորականից ավելի շատ» է դրսևորվում շեղվող/դեվիանտ/ վարքը կամ՝ դրա հանդեպ հակվածությունը: Ի վերջո հիմնականում վերջին հազարամյակում հայությունը ապրել է պետականորեն նվաճվածության, սոցիալապես կախվածության /ոչ ինքնուրույնության/ պայմաններում, ինչը բնականորեն հանրային կյանքի միջավայրը շատերի համար դարձրել է պաշտոնապես ու բարոյապես ճնշող, «ոչ հարազատ», վտանգավոր և այլն: Նման պայմաններում ըմբոստ բնավորությունների համար, իրենց ըմբռնմամբ «փրկությունը օրենքը շրջանցելու մեջ է»: Ի լրումն գոյություն ունեցող տվյալների, միայն աշխարհով սփռված ողջ հայության մասշտաբով ներկայացուցչական գիտական ուսումնասիրություններն են ի զորու համարժեքորեն բացահայտել թե՛ դրանց պատճառները, և թե՛ տարածվածության աստիճանը՞: Ենթադրյալ պատճառներ կարող են լինել բնատուր որոշակի հակվածությունները, ընտանեկան դաստիարակության ուղղվածությունը, «անհարազատ» սոցիալական միջավայրում «հարմարվելու» պարտադրությունը, նման միջավայրի հակակրանքին /թշնամանքին/ դիմակայելու ցանկությունը և այլն: Կարծում ենք այս երևույթի սուբյեկտիվորեն չափազանցեցված ու հրապարակայնորեն արտահայտված կարծիքներն ու դատողություններն են հիմք տալիս /ինչի հնարավորությունները բազմապատկվել են ժամանակակից տեղեկատվական «զարթոնքի» մեջ/ հայ անհատին ընդհանրապես վերագրել նրա էությանը ոչ բնորոշ որակներ: Դրանց օբյեկտիվ նկարագրությունն ու վերլուծությունը, դրսևորման չափի ներկայացումը ներկա հոդվածի շրջանակներից դուրս է: Ընդամենը այստեղ նշենք, որ երևույթի գիտական հետազոտությունն ու արդյունքները կարող են օգտակար լինել Հայաստանում հանրային կարծիքի

ուսումնասիրությունների հանդեպ ցանկալի վստահության ձեռքբերման հարցում: Այն, ինչը մեծապես պայմանավորում է հարցերի անկեղծ պատասխանը և հետևությունների համարժեքությունը, դրանց հանդեպ վստահությունը:

Մեթոդական ու հավանականային մաթեմատիկական պարտադրություններից բացի, զրուցավարի կամ հարցաթերթիկի հարցերին անկեղծ պատասխանի հիմնախնդիրը՝ ընդհանրապես սոցիոլոգիական ուսումնասիրության ծրագրի բարոյա-մեթոդաբանական ու աշխարհայացքային հիմնավորվածության ու արդարացվածության «գերխնդրի» բաղկացուցիչն է: Այն ոչ միայն հակասական դիալեկտիկական կապերով կապված է տվյալ սոցիումի քաղաքական ու գաղափարական առաջնահերթությունների հետ, այլև առնչվում է հետազոտական թիմի, ուսումնասիրության կազմակերպիչների ու իրացնողների արժեհամակարգի առաջնահերթությունների, գիտության ու գիտնականի բարոյականության խնդիրների ըմբռնման ու զգացողության հետ: Այստեղ ևս որոշակի էթնո-մշակութային միջավայրերում գիտական գիտելիքի կիրառման յուրահատկություններին նվիրված ուսումնասիրությունները դառնում են ժամանակի հրամայականը: Քաղաքակրթվածության ներկա զարգացումներում այն արդիական է ու պահանջում է գաղափարա-քաղաքական ու միջգիտական շատ ավելի սերտ համագործակցություն, քան եղել է նախկինում: Այդ իմաստով ակադեմիական հետազոտությունները, որոնք «պատվիրված չեն» պարտադիր իրական կյանքում անմիջականորեն ներդնելու համար, ձեռք են բերում ինքնաբավ նշանակություն: Նման ակադեմիական ուսումնասիրությունները կարևոր տեսա-գործնական նշանակություն ունեն նաև այն պատճառով, որ որոշակի ճշգրտում են մտցնում «սուբյեկտիվ աշխարհի օբյեկտիվության ըմբռնման թույլատրելի սահմանի» մեջ:

Այն, որ զրուցավարի արժեքային գերակայությունները յուրովի անդրադառնում են նման հարցերի պատասխանների վրա, դեռևս չորս տասնամյակ առաջ բացահայտված է Գ.Պողոսյանի մի հոդվածում [18]:

---

[18] 1978-80թթ. Երևանի 11 խոշորագույն մշակող արդյունաբերական ձեռնարկություններում անցկացված հետազոտությունը, որը եզակի էր խորհրդային հայաստանյան իրականության մեջ, նվիրված էր աշխատանքային ակտիվության հիմնախնդիրներին: Ի թիվս այլոց, ուսումնասիրության մեջ շոշափվում էր նաև

Սեփական մեթոդիկայով նա, մինչև հիմնական հարցումները, պարզել էր զրուցավարների արժեքային այն նույն գերակայությունները, որոնք Երևանի արդյունաբերական ձեռնարկությունների աշխատողներից պետք է ստացվեին դաշտային հետազոտության ընթացքում: Այնուհետև, ճշգրտորեն համեմատելով տվյալները պարզվել էր, որ զրուցավարների կողնորոշումները որոշակի ազդեցություն են գործել աշխատողների պատասխանների վրա: Գիտական փաստ, որը հուշում է յուրովի մոտենալ հարցազրույցների օգնությամբ ստացված տեղեկությունների սոցիոլոգիական գնահատականին: Կիրառական սոցիոլոգիայի զարգացման համար արվել է հատկանշական հետևություն, այն, թե՝ «…նպատակահարմար ենք գտնում մեթոդական փորձարարությունը ներմուծել սոցիոլոգիական հետազոտության պրակտիկայում,դիտելով այն իբրև վերջինիս անհրաժեշտ բաղկացուցիչ տարր»[19]: Գաղափարը մենք օգտագործել ենք մեր հետագա մի շարք հարցումներում /տես ստորև/:

Հասարակական հարցումների տվյալների հավաստիության ու վստահելիության մեկ ուրիշ կարևոր խնդիր է «պատասխանողների իրազեկվածությունը»: Տեսականորեն էական տարբերություն կա գիտակցված և ոչ գիտակցված /թելադրված, բնազդային, ինտուիտիվ և այլն/ ընտրությունների միջև: Դա վերաբերվում է ինչպես քաղաքական բոլոր մակարդակի ընտրություններին, այնպես էլ հանրային կյանքի բոլոր ոլորտների գործունեության կառավարմանն ու կարգավորմանը, պաշտոնականի հետ ոչ պաշտոնական հարաբերությունների ներդաշնակեցմանն ու աշխատանքի արդյունավետության բարձրացմանը ծառայեցնելու խնդիրներին[20]:

աշխատողների արժեքային գերապատվությունները բացահայտող հարցեր (Տե՛ս **Ղոռոսյան Գ.,** Սոցիոլոգիական ինֆորմացիայի հավաստիության աստիճանի բարձրացման հարցերը // «Սոցիալիստական ապրելակերպը և անհատի աշխատանքային ակտիվությունը» ժողովածու, Եր., 1983, էջ 156-195):

[19] Նույն տեղում՝ էջ 194:

[20] Երևանի մշակող արդյունաբերության 11 խոշոր ձեռնարկություններում անցկացված վերոնշյալ հեռազոտության մեջ, որի անմիջական մասնակիցն էր նաև տողերիս հեղինակը, ի թիվս այլոց, քննարկվել են իրազեկվածության հետ աշխատանքային ակտիվության չափանիշների/արտադրանքի որակ, կարգապահություն, նախաձեռնողականություն և այլն/ կապվածության հարցը: Ըստ կատարված հետևությունների իրազեկվածների /«գործից տեղյակների»/ աշխատանքային ակտիվությունը որակապես ու քանակապես ավելի բարձր էր, քան «պակաս

Բնական է նաև, որ հանրային գործընթացների կառավարման մեջ իրական ժողովրդավարության աստիճանը ուղիղ համեմատական կապով կապված է «կառավարվողների» իրազեկվածության, և հետևաբար՝ կառավարման արդյունավետության հետ: Ընդհանուր կյանքի իրազեկվածության կարևորագույն աղբյուրներից մեկը հենց հանրային կարծիքի հարցումներն են, որոնց հետ ետադարձ կապով կապված է հարցման մասնակիցների տեղեկացվածությունը: Որքան համարժեք է հարցին պատասխանելու համար անհրաժեշտ տեղեկացվածությունը, հետաքրքրող խնդիրների լուծման մեջ պատասխանողի իրական շահագրգռվածությունը, այնքան ավելի մեծ է հավաստի ու վստահելի հարցման տվյալներ ստանալու հավանականությունը: Հարցումներում զուտ պաշտոնական կրթության մակարդակի չափանիշով իրազեկվածության մասին ենթադրությունները ոչ միշտ և ոչ համարժեք են արտացոլում երևույթի իրական պատկերը: Այստեղ պակաս կարևոր դեր չեն կատարում /եթե ոչ ավելի/ անձնավորության ինքնակրթվածությունը, պաշտոնական հարաբերություններում կառավարման ոճը, կրթվածության արդյունքում ձևավորված սոցիալական ակտիվությունը, անկախ սոցիալական կարգավիճակից հանրային կյանքի համապատասխան դրվագների համար անձնական պատասխանատվության զգացողությունը և այլն: Ասվածը ցուցադրենք հարցումների ոլորտում ունեցած կրթական աշխատանքային փորձի մեկ օրինակով:

Շուրջ երեք ու կես տասնամյակ Հայաստանի տարբեր բուհերում հետազոտվում են ուսանողների /սովորողների/ կողմից պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի գործունեության գնահատումները[21]:

տեղյակներինն» ու «անտեղյակներինը»(Տե՛ս **Կյուրեղյան Է.**, Աշխատանքի նկատմամբ վերաբերմունքի մի քանի ցուցանիշների և գործոնների վերլուծությունը // Սոցիալիստական ապրելակերպը և աշխատանքային ակտիվությունը,Եր., 1983, էջ 34-67):

[21]Այն մենք Հայաստանում առաջիններից ենք կիրառել սեփական ու գործընկերների վարկանիշը ստանալու ու տվյալները օգտագործելու նպատակով, սկսած 1980-ականների սկզբից, արհիմութենական ակտիվի դասընթացներում: 1990-ականների կեսերից կանոնակարգված տեսքով այն պարտադրված է բոլոր բուհերին և օգտագործվում է ատեստավորման մեջ: Կրթական հանրությանը այն հայտնի է որպես «Դասախոսը ուսանողի աչքերով» հարցում: Մանրամասն Տե՛ս Դասախոսն ուսանողի աչքերով, Մեթոդական ցուցումներ, Կազմ. **Կյուրեղյան Է., Շամիրյան Վ., Եսայան Հ.**, Եր., 2006:

Այն, ինչը թերևս, «ի հեճուկս» սուբյեկտիվ, երբեմնի անհամարժեք գնահատումների պետք է հակառակորդներ չունենար: Սակայն դիտարկումները ցույց են տալիս, կրթական հանրության որոշ հատվածի մոտ վատատեսության ու անվստահության պակաս չի զգացվում: Եվ դա միջավայրի սոցիոլոգիական մշակույթի անբավարարությունից է: Այն է՝ սոցիոլոգիական գիտելիքի հավանականային բնույթի ընկալման, հանրությանը որպես ամբողջական սուբյեկտի դիտարկման, սեփական վարքի ու գործունեության հետ դրանց կապը ըմբռնելու անկարողությունը:

Թերևս, ընկալելի է հոգեբանորեն ու բարոյապես գնահատողների կողմից հետազոտողների ազնվությանն ու արդարացիությանը չվստահելը, հարցումների փաստն ու արդյունքները շահարկելու մտավախությունը: Սակայն գիտականորեն անընդունելի են այն բացահայտված «փաստարկները», որոնցով ընդհանրապես մերժվում են նման հարցումների պիտանիությունը: Էլիզաբեթ Նոյելի դիպուկ գնահատմամբ դա առնչվում է «հատկանիշներով» դատելու անկարողության հետ: Մասնավորաբար, երբ անհատական, անկրկնելի աշխարհին վերաբերող որակները /ազատություն, անկախություն, անձի ամբողջականություն և այլն/ անհիմն կերպով մտովի տեղափոխվում է հավանականությունների տեսության միջոցով ամբողջական հանրույթի հատկանիշների կանխատեսման ու գնահատման ոլորտ[22]:

Դասախոսական ու սոցիոլոգիական մեր պրակտիկայում, օգտվելով ակադեմիկոս Գ. Պողոսյանի վերոնշյալ գաղափարից, բուհերից մեկում, որտեղ տարիների ընթացքում պարբերաբար անցկացվում էին տվյալ հարցումները, փորձեցինք յուրովի ստուգել ուսանողների գնահատականները, հնարավորինս դրանց «ճանապարհից» վերացնելով բարոյա-հոգեբանական խոչընդոտները: Դրա համար ընտրվել են մի շարք տարբեր կարգավիճակ ունեցող դասախոսներ, որոնք նախապես հիվանդագին չեն ընդունում իրենց

---

[22] Նույնիսկ հարակից մասնագիտությունների տեր որոշ բուհական աշխատողներ «տանել չեն կարողանում» «Միջին վիճակագրական մարդ», «վիճակագրական վարկանիշ» և այլն տերմինները, որոնք, տարածված կարծիքի համաձայն համահարթեցնում է բնավորությունները, խոչընդոտում է անհատական էության բացահայտմանը, հետևաբար և՝ «վնասում է գործունեությանը»/Հարցումների հանդեպ անվստահության մասին ավելի մանրամասն տե՛ս **Ноэль Э.**, указ.соч.С. 23-49:

որակների գնահատականները: Նրանց հետ մի շարք հանդիպումներում քննարկվեց ու պարզաբանվեց ինչպես հավանականային գիտելիքի, այնպես էլ դրա կիրառման յուրահատկությունները: Պայմանավորվեցինք, որ մենք ամրագրելու ենք յուրաքանչյուր տարվա ընթացքում նրանց հոգե-բարոյական վիճակը, տրամադրությունն ու դասախոսական ակտիվությունը կամ պասիվությունը խթանող միջադեպերը, ինչը «հավերժ» գաղտնիություն է մնալու միջավայրի համար: Նման հարցումների համար նախատեսված կանոնակարգի շրջանակում ընտրվել են այն խմբերը, որոնց հետ կատարվել են լրացուցիչ խորհրդատվություն, «միջին գնահատականների» էության, իրենց ուսման համար դրանց կարևորության պարզաբանում: Ըստ որում՝ առավելագույնս հնարավոր է դարձվել փորձարարությունը անցկացնել այն խմբերում, որոնց հարցումների կազմակերպիչներն ու իրագործողները նաև դասավանդում են որոշակի հումանիտար առարկաներ: Դասավանդման ընթացքում պայման է եղել սեփական նկարագրով իրագործել առավել հնարավոր միջոցները, բարոյապես ուսանողների բարյացակամությունն ու վստահությունը ձեռք բերելու ուղղությամբ: Դա հատուկ ավելի շատ վերաբերվում է այն հարցադրումներին, որոնք նախատեսված են հետագայում բոլոր դասախոսներին գնահատելու համար: Օրինակ. Նյութի մատուցման մատչելիությունը, կարգապահության հանդեպ վերաբերմունքը, գնահատման արդարացիությունը, նրբազգացությունը և այլն: Այնուհետև, հինգ տարվա ընթացքում, ընտրված դասախոսների գնահատականները համադրվել են նրանց պատրաստվածության ինքնագնահատականի, դասերի անցկացման որակի վրա կենսագրական միջադեպերի ու ներհոգեկան վիճակի ազդեցության հետ: Կատարվել են համեմա-տություններ նաև մինչփորձարարական գնահատականի հետ: Արդյունքում մասնակիցները համոզվել են, որ «Մեծ թվերի օրենքը» հստակորեն գործում է ուսանողների գնահատականներում: «Թերագնահատումներն ու գերագնահատումները «չեզոքացնում են միմյանց և արդյունքում մնում է դասավանդվող ուսանողության, որպես գնահատող ամբողջական սուբյեկտի միջին գնահատականը, ատեստավորման փուլում որպես գործունեության հոգեբանական հայելային անդրադարձ:

Երբ գլխավոր համախումբը կազմում են հարյուր հազարավոր, միլիոնավոր անձիք, նման բարյացակամությունն ու վստահությունը ձեռք է բերվում տարիների, նույնիսկ հետազոտական սերունդների /դպրոցների/ գործունեության արդյունքներով: Սոցիոլոգիապես զարգացած քաղաքակրթություններում ու սոցիալական իրակա-նության մեջ վերջին հարյուրամյակում ձևավորվել են համընդհանուր ընդունված նախադեպեր, այնպիսիք, ինչպիսին են Հելապի, Հարիսի, Նոյելի և այլն դպրոցները:

Ամփոփելով, կարող ենք ասել, որ էթնո-մշակութային ինքնատի-պությունն ու պատմականորեն ձևավորված ներէթնիկական խայտաբ-ղետությունը հանրային կարծիքի հարցումներում անհամասեռության կարևոր գործոններ են; Այն, ինչը հանրային կառավարման տարբեր ոլորտների հարցումների որակական ներկայացուցչության, և հետևաբար, արդյունքների հավաստիության կարևորագույն ցուցիչներից է: Հարցումների հանդեպ վստահության, հետևաբար պատասխանների անկեղծության ու լիարժեքության մեջ էական դեր ունեն պատասխանողների իրազեկվածությունն ու կազմակեր-պիչների բարոյա-հոգեբանական նկարագիրը: Այն, ինչը ակադեմիական սոցիոլոգիական հարցումների նշանակությունն ու հանրային գիտակցության մեջ դրանց անհրաժեշտության գիտակ-ցումը դարձնում են ինքնաբավ արժեք:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հանրության սոցիալ-քաղաքական և սոցիալ-տնտեսական կառավարման մեջ սոցիոլոգիական գիտելիքի պահանջարկի ժամանակակից իրողությունների համատեքստում հոդվածում քննարկվում են հանրային կարծիքի հարցումներում տվյալների վստահելիության ու հավաստիության խնդիրները: Հակիրճ դիտարկվում է հանրային կարծիքի հարցումների 200-ամյա պատմության հակասական զարգացումներն ու նրանց հանդեպ պաշտոնական ու ոչ պաշտոնական վերաբերմունքը: Շեշտադրվում է Հայաստանի Հանրապետության ազգաբնակչության պատմականորեն ձևավորված խայտաբղետության ազդեցությունը ընտրանքի ներկայացուցչության վրա: Առանձին վերլուծվում են սոցիոլոգիական մշակույթի, հարցումների օգտակարության հանդեպ վստահության դերը առաջադրված հարցերի անկեղծ պատասխանների ու

հետևությունների հավաստիության վրա: Որոշակի օրինակներ է բերվում կրթական ու արտադրական ոլորտներից:

Բանալի բառեր. հասարակական կարծիք, սոցիոլոգիական գիտելիքի պահանջարկ, ընտրանքի ներկայացուցչություն, ազգաբնակչության խայտաբղետություն, աշխարհայացքային յուրահատկություններ, տվյալների հավաստիություն, տվյալների օգտագործման բարոյական հուսալիություն, դասախոսի վարկանիշ:

О ДОСТОВЕРНОСТИ ДАННЫХ В ОПРОСАХ ОБЩЕСТВЕННОГО МНЕНИЯ

Эдик Кюрегян
Кандидат философских наук, доцент,
Старший научный сотрудник Института
философии, социологии и права НАН РА

РЕЗЮМЕ

В статье обсуждаются задачи доверительности и достоверности данных в опросах общественного мнения в контексте современных реалий потреб-ности социологического знания в социально-политическом и социально-экономическом управлении обществом. Коротко рассматривается противо-речивые события 200-летней истории опросов общественного мнения, формальное и неформальное отношение к ним. Акцентируется влияние исторически сформировавшегося неоднородности населения Республики Армения на репрезентативность выборки. Отдельно анализируются роль доверия в социологической культуре к полезности опросов в отношении искренности ответов на вопросы и достоверности результатов. Приводятся конкретные примеры из областей социологии образования и производства.

Ключевые слова: общественное мнение, потребность в социологическом знании, репрезентативность выборки, неоднородность населения, мировоз-зренческие особенности, достоверность данных, моральная надежность использования данных, рейтинг преподавателя.

THE SUMMARY ABOUT THE RELIABILITY OF DATA IN PUBLIC OPINION POLIS

Edik Kyureghyan
Candidate of Philosophical Sciences, Associate Professor
Senior Researcher of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA

SUMMARY

In the context of modern realities of the demand for sociological knowledge, in the sociopolitical and socioeconomic management, the issues of data reliability and assurance in the public opinion polis are being discussed. In the 200-year history, the controversial developments of public opinion polis and their official and non-official attitude towards them are briefly consideret. The influence of the historically formed population diversity of the Republic of Armenia emphasizes the representative sample. The role of trust in sociological culture, the use of surveys on the honest answers to the cuestions and the reliability of conclusions are being analized separately. Moreover, some examples from educational and industrial fields are presented.

Key words: public opinion, demand for sociological knowledge, a representative sample, population diversity, worldview unicueness, data reliability/assurance, moral reliability of data usage, professors rating.

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԵՎ ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ. ՈՐՈՇ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Անահիտ Ջիջյան

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի գիտական քարտուղար

Ռոմիկ Քոչարյան

Փիլիսոփայության գիտությունների թեկնածու, դոցենտ,
«Մատենադարան» Մ. Մաշտոցի անվ. գիտահետազոտական
ինստիտուտի ավագ գիտաշխատող

Սոցիալական աշխատանքի (սատարագիտության) որպես այդպիսին գոյության իսկության բացորոշմանը նպատակամետ՝ հարկ է ներկայացնել սոցիալական աշխատանքի առաջացման, իրական կայացման ու դրան համեմատ՝ անհրաժեշտ ու նախընտրելի պիտոյականությամբ ներկատարելագործման առանձնահատ-կություններ: Այդ գործընթացին համատեղ ու համընթաց՝ քննահասկացմամբ ու մեկնորոշմամբ հարկ է ներկայացնել նաև սոցիալական աշխատանքի առաջացման ու ներկատարելագործվող կայացման հանգամանքները՝ ***հիմնարար ու ռելևանտ գործոնները:***